ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎԳԻՆԵ ՌՈԲԵՐՏԻ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

ԻԲ.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ
սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Ե. Մկրտիչյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մ.Ի. Զասլավսկայա**
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հ.Ռ. Վերմիշյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2017 թ. հունիսի 23-ին, ժ. 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52ա:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
դոցենտ Գ.Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրմամբ նորանկախ Հայաստանը բռնեց տեղական ժողովրդավարության կայացման ճանապարհը՝ կարևորելով վարչատարածքային նոր բաժանման արդյունքում ձևավորված համայնքների ինքնուրույն կառավարումն ու ինքնակազմակերպումը: Այդ պահից բնակչության սոցիալական պաշտպանությունն օրենսդրորեն հռչակվեց տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ-երի) գործառման հիմնական ուղղություններից մեկը. դա ենթադրում է, որ համապատասխան համակարգում ՏԻՄ-երը պիտի ունենան գործուն դերակատարում: Սակայն դրանք ներկայումս բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում իրենց վերապահված գործառույթների և լիազորությունների պատշաճ իրականացման ընթացքում բախվում են բազմաթիվ խնդիրների: Այդ մարմիններն այսօր դժվարանում են բնակչությանը տրամադրել համայնքային սոցիալական ծառայություններ, արդյունավետորեն արձագանքել համայնքների սոցիալական հիմնախնդիրներին և հանդես գալ որպես բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացների լիիրավ սուբյեկտ: Ստեղծված իրավիճակի պատճառները, հետևանքներն ու հնարավոր ազդեցությունները տարբեր են, միևնույն ժամանակ՝ փոխկապակցված, և, որն ամենակարևորն է, դրանք խորքային և համալիր ուսումնասիրության կարիք ունեն: Սակայն, չսահմանափակվելով միայն դրանց ուսումնասիրությամբ, այլև կարևորելով բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման մոդելի մշակումն ու նկարագրությունը, սույն աշխատության շրջանակներում կիրառվել է *սոցիոլոգիական մոդելավորման մեթոդը*:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Տեղական ինքնակառավարման երևույթը հայտնի է եղել շատ ավելի վաղ, քան անգամ պետության ձևավորումն է: Սակայն գիտական ուսումնասիրությունների կենտրոնում այն հայտնվել է բավականին ուշ, մասնավորապես՝ 18-րդ դարում, երբ Եվրոպան ալեկոծվում էր բուրժուական հեղափոխությունների հուժկու ալիքից: Այդ ժամանակվանից ի վեր տեղական ինքնակառավարումը գտնվել *է ֆրանսիացի (Ժ.-Գ. Տուրե, Ա. Տոկվիլ), գերմանացի (Լ. Շտեյն, Գ. Ելինեկ, Ռ. Գնեյստ), ռուս (Ա. Գրադսկի, Վ. Բեզոբրոզով, Բ. Չիչերին), ամերիկացի (Թ. Ջեֆերսոն)* և այլ քաղաքական գործիչների, հետազոտողների, գիտնականների ուշադրության կենտրոնում: Նրանց աշխատությունները հիմնականում ուղղված են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունները քննարկելուն և կրում են քաղաքագիտական բնույթ կամ ունեն իրավագիտական շեշտադրումներ: Նմանատիպ աշխատություններով աչքի են ընկնում նաև հայ հեղինակները, ովքեր տարբեր ժամանակաշրջաններում (հիմնականում ՀԽՍՀ ժամանակվանից սկսած մինչ մեր օրերը) անդրադառնում են տեղական ինքնակառավարման սկզբունքներին, պետության հետ ունեցած հարաբերություններին, դրանց կարգավորման

օրենսդրական բացերին, ապակենտրոնացման հիմնախնդիրներին, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման գործում ՏԻՄ-երի ունեցած դերին *(Հ. Խաչատրյան, Դ. Թումանյան, Ա. Հարությունյան, Է. Օրդյան, Յու. Սուվարյան, Վ. Շահբազյան, Ն. Հակոբյան, Դ. Մարգարյան* և այլոք): Ուսումնասիրությունների մի ստվար մասն էլ տնտեսագիտական ուղղվածության է և առավելապես ներկայացնում է տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ու արդյունավետ գործառման տնտեսական հիմքերը, ռեսուրսային, հիմնականում՝ ֆինանսական ապահովվածության հիմնահարցերը (*Հ. Հարությունյան, Ս. Հարոյան, Ա. Գևորգյան* և այլոք):

Սոցիոլոգիայում տեղական ինքնակառավարման հիմնախնդիրներին նույնպես որոշակի անդրադարձ կա, չնայած այն իր ծավալով և բովանդակային ընդգրկվածությամբ զիջում է քաղաքագիտության և տնտեսագիտության ոլորտներում կատարվող ուսումնասիրություններին:

Սոցիոլոգիական մտքի կարկառուն ներկայացուցիչները՝ *Մ. Վեբերը, Յու. Հաբերմասը, Պ. Բուրդյեն*, ոչ անմիջականորեն, սակայն անդրադարձել են տեղական ինքնակառավարմանն առնչվող այնպիսի հարցերի, ինչպիսիք են ինքնակազմակերպումը, ինքնակառավարումը, լիազորությունների պատվիրակումը և այլն: Քաղաքի զարգացման և քաղաքային տնտեսության կառավարման հիմնախնդիրներն իր աշխատություններում մեկնաբանել է *Լ. Վելիխովը*:

Տեղական ինքնակառավարման երևույթի սոցիոլոգիական վերլուծության սղությամբ են աչքի ընկնում նաև հայ սոցիոլոգների աշխատությունները: Ներկայացնելով Հայաստանում համայնքի զարգացման և գործառման առանձնահատկությունները, իրենց աշխատություններում ՏԻՄ-երի գործունեությանն անդրադարձել են *Գ. Բեգլարյանը, Վ. Սահակյանը, Հ. Վերմիշյանը, Գ. Շահնազարյանը, Ա. Սահակյանը և այլոք*:

Համայնքների սոցիալ-մշակութային հիմնախնդիրներն արծարծվում են նաև էթնոսոցիոլոգների և ազգագրագետների աշխատություններում (*Մ. Գալստյան, Մ.Գաբրիելյան, Հ. Խառատյան, Հ Մարության և այլոք*):

Բնակչության սոցիալական պաշտպանությունը բավականին հրատապ թեմա է Հայաստանում իրականացվող սոցիոլոգիական ուսումնասիրությունների համար: Սոցիալական պաշտպանության, սոցիալական քաղաքականության հիմնահարցերի *սոցիոլոգիական մեկնաբանությամբ* առանձնանում են *Ս. Ասրվածատուրովի* աշխատությունները: Նա ներկայացրել է սոցիալական քաղաքականության համակարգային վերլուծությունը, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառման մակարդակների շարքում առանձնացրել տեղական ինքնակառավարման կամ համայնքային մակարդակը:

Բնակչութան սոցիալական պաշտպանության համակարգային ուսումնասիրության հիմնահարցերը քննարկված են նաև *Մ. Յարմալոյանի* աշխատություններում:

Հայաստանյան գիտահետազոտական ուսումնասիրությունների դաշտում ակնհայտ է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման համալիր ուսումնասիրությունների և վերլուծությունների պակասը: Դրանք, կարելի է ասել, առհասարակ չեն իրականացվում: Դեռևս բացակայում են նաև համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սոցիոլոգիական մոդելավորման փորձերը, որի պահանջը նույնպես առկա է ստեղծված իրավիճակի վերլուծության, գիտական մեկնաբանության, արդյունքների հայեցակարգման և համապատասխան մոդելի մշակման համար:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության նպատակն է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սոցիոլոգիական մոդելավորումը:

Ատենախոսության նպատակը ենթադրում է հետազոտական հետևյալ խնդիրների լուծում.

1. ներկայացնել տեղական ինքնակառավարման և բնակչության սոցիալական պաշտպանության համակարգերի կառուցվածքագործառութային վերլուծությունը,
2. վերլուծել բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման տեսաիրավական հիմքերը,
3. ներկայացնել բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման միջազգային փորձը և դրա հիման վրա առանձնացնել միջազգային պրակտիկայում ձևավորված մոդելները,
4. նկարագրել Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացներում համայնքների մասնակցության և ունեցած դերակատարման պատմականորեն ձևավորված հիմքերը և մշակութային նախադրյալները, դրանց փոփոխման միտումներն ու պատճառները,
5. ուսումնասիրել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի ունեցած դերակատարման բնույթը, ձևերը, գործուն դերակատարմանը խոչընդոտող գործոնների ազդեցությունը,
6. էմպիրիկ հետազոտությունների ընթացքում ստացված տեղեկատվության վերլուծության, տեսական մեկնաբանությունների և հայեցակարգման միջոցով մշակել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման կառուցվածքագործառութային մոդելը,
7. սոցիոլոգիական մոդելավորման արդյունքներից ելնելով՝ ներկայացնել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործուն դերակատարմանն ուղղված առաջարկներ և պահանջված փոփոխությունների իրականացման հնարավոր եղանակներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում որպես նորույթ առկա են մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

1. ներկայացված է տեղական ինքնակառավարման համակարգի կառուցվածքագործառութային վերլուծությունը, որի արդյունքներն ընկած են ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սոցիոլոգիական մոդելի մշակման հիմքում,
2. միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ներկայացված է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման մոդելների նոր տիպաբանություն,
3. բացահայտված են ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործուն դերակատարմանը խոչընդոտող հիմնական գործոնները և դրանց ունեցած ազդեցությունները տեղական ինքնակառավարման, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգերի գործառման և փոխհարաբերությունների վրա,
4. ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման ուսումնասիրության նպատակով առաջին անգամ կիրառվել է սոցիոլոգիական մոդելավորման մեթոդը,
5. մշակված է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման կառուցվածքագործառութային մոդելը, որն ուղղված է համալրելու մոդելավորման օբյեկտին վերաբերող տեսական մեկնաբանությունների շարքը, նպաստելու գիտական տարբեր ուղղություններում իրականացվող հետազոտությունների շարունակականությանը, ինչպես նաև տրամադրելու սոցիալական կանխատեսումների համար անհրաժեշտ հիմքեր,
6. սոցիոլոգիական մոդելավորման արդյունքներից ելնելով, ներկայացված է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործուն դերակատարման ապահովմանն ուղղված առաջարկների շարք, որոնք կիրառելի են ինչպես ներկայիս պայմաններում, այնպես էլ ՀՀ հանրային կառավարման համակարգի առանցքային բարեփոխումները, մասնավորապես՝ համայնքների խոշորացման գործընթացներն ու ակնկալվող արդյունքները հաշվի առնելով:

Ատենախոսության տեսամեթոդաբանական հիմքերը: Ատենախոսությունը հիմնվում է համակարգային վերլուծության հիմնարար դրույթների վրա, որոնց միջոցով իրականացվել է տեղական ինքնակառավարման համակարգի սոցիոլոգիական վերլուծությունը: Այդ մոտեցման դրույթներն են ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սոցիոլոգիական մոդելավորման հիմքում, որի ընթացքում կիրառվել են կառուցվածքագործառութային վերլուծության, իդեալական տիպի ձևավորման, օբյեկտի հետ կառուցվածքային և գործառութային համապատասխանության սկզբունքով մոդելի մշակման մեթոդաբանությունները:

Ատենախոսության էմպիրիկ հիմքում են.

1. տեղական ինքնակառավարման զարգացմանը, ապակենտրոնացման խնդիրներին, ՏԻՄ-երի լիազորություններին վերաբերող ՀՀ պետական ռազմավարական փաստաթղթերը, պետական կառույցների հաշվետվությունները, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները և հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները,
2. բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունների արդյունքները,
3. 2014-2015 թվականների ընթացքում ՀՀ 46 համայնքում հեղինակի կողմից առանցքային տեղեկատուների հետ անցկացված հարցազրույցների արդյունքները,
4. 2014-2015 թվականների ընթացքում հեղինակի կողմից իրականացված փորձագիտական հարցման տվյալները (15 հարցում),
5. 2014-2015 թվականների ընթացքում ՀՀ մի շարք համայնքների բնակիչների հետ անցկացված կիսաստանդարտացված հարցման արդյունքները (ընտրանքի ծավալը՝ 400 հոգի):

Ատենախոսության տեսական նշանակությունը նրանում է, որ դրա արդյունքները համալրում են ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման բնութագրիչներին վերաբերող տեսական դրույթներն ու մեկնաբանությունները, ինչպես նաև ապահովում են նոր հենք և շարունակականություն գիտական տարբեր ուղղություններում համանման ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորած է մշակված մոդելի՝ սոցիալական կանխատեսումների համար ընձեռած հնարավորություններով և նպատակային ու արդյունավետ փոփոխությունների համար ստեղծած նախադրյալներով:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնում:

Ատենախոսության հիմնական գաղափարները ներկայացված են գիտական 9 հոդվածներում, ինչպես նաև՝ 2015 թվականին ԵՊՀ-ում կայացած «Սոցիալական պաշտպանության համակարգը անկախության պայմաններում» խորագրով հանրապետական գիտաժողովում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (8 ենթագլուխ), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից, ծավալը կազմում է 151 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածական մասում** հիմնավորվում են հիմնախնդրի արդիականությունն ու հրատապությունը մեր հասարակության համար, ինչպես նաև ներկայացվում են հիմնախնդրի գիտական մշակվածության մակարդակը, աշխատանքի նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան: Ներածական մասը նվիրված է նաև աշխատանքի տեսամեթոդաբանական հիմքերի քննարկմանը, գիտական նորույթի, տեսական և կիրառական նշանակության ներկայացմանը:

Ատենախոսության ***առաջին գլուխը՝ «Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման ուսումնասիրության տեսամեթոդաբանական հիմքերը»*** վերնագրով, 1բաղկացած է երեք ենթագլխից, որոնցից առաջինում ներկայացվում են տեղական ինքնակառավարումը մեկնաբանող դասական և արդի տեսությունները, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման տեսական հիմքերը:

Տեղական ինքնակառավարման երևույթի մեկնաբանության առաջին փորձերը իրավաքաղաքական բնույթ են կրել, իսկ մեկնաբանության տարբերակները ներկայացվել են եվրոպական մի շարք երկրների, օրինակ՝ Ֆրանսիայի, Բելգիայի սահմանադրություններում:

Առաջին տեսությունները, որոնք սկսեցին ձևավորվել 19-րդ դարի սկզբին, ուղղված էին տեղական իշխանությունների և պետության միջև հարաբերությունների, դրանց կարգավորման եղանակների և համայնքային կառավարման գործընթացներին պետության միջամտության հնարավորությունների ու ընդունելի սահմանների ուսումնասիրմանը:

Արդեն 20-րդ դարասկզբին տեղական ինքնակառավարումը մեկնաբանող տեսությունների շարքը համալրվում է նորանոր տեսություններով, որոնցից մեկը *սոցիալական սպասարկման տեսությունն է*, համաձայն որի ՏԻՄ-երի առաջնային և կարևորագույն խնդիրը համայնքի բնակչությանը սոցիալական ծառայությունների տրամադրումն է և նրանց կարիքների արդյունավետ բավարարմանը նպաստելը: Այս տեսության հիմնական դրույթներն արտացոլված են ռուս հեղինակ *Լ.Ա Վելիխովի* աշխատությունում, որում հեղինակը համայնքային բարեկարգումը դիտում է որպես բազմասպեկտային հասկացություն, որը որպես տեղական իշխանությունների գործառման հիմնական նպատակ, ենթադրում է նաև դրանց անմիջական մասնակցությունը և գործուն դերակատարումը բնակչության սոցիալական հիմնախնդիրների հաղթահարման ու սոցիալական պաշտպանվածության ապահովման գործընթացներում:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման նոր մոտեցում առաջադրեցին միջազգային իրավական այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան և Եվրոպական սոցիալական վերանայված խարտիան, որոնք վավերացրած պետությունները պարտավորվեցին ապահովել բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացներում ՏԻՄ-երի ակտիվ և գործուն դերակատարումը: Այդ պետությունների շարքում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման սոցիոլոգիական վերլուծություն»***, ներկայացվում է «դերակատարում» հասկացության մեկնաբանությունը, որն առաջադրվել է Տ. Պարսոնսի տեսության շրջանակներում: Համաձայն այդ տեսության՝ *դերակատարումը* գործընթաց է, որը համակարգում ներառված ակտորն իրականացնում է ներհամակարգային փոխազդեցությունների շրջանակներում որևէ կոնկրետ նպատակի իրագործման համար՝ ելնելով համակարգում զբաղեցրած իր կարգավիճակից[1]: Այն ունի մոտիվացնող նշանակություն թե՛ ակտորի, թե՛ համակարգի համար, քանի որ կրում է համակարգի ինքնապահպանմանը և զարգացմանը, ակտորի կարիքների բավարարմանը միտված բնույթ և հիմնվում է արտաքին միջավայրի սոցիալական սպասումների վրա[2]: Դերակատարման բնույթն ուսումնասիրելու և վերջինիս մասին համապատասխան դատողություններ անելու համար այն ընդունված է բնութագրել *դերատկարման նպատակների, խնդիրների, սկզբունքների, հիմքերի կամ նախապայմանների, դերակատարումն ապահովող գործառույթների ու հարաբերությունների, հնարավոր ազդեցությունների և համակարգի գործառման վրա թողած հետևանքների միջոցով:* Հենց այդ բնութագրիչների հիման վրա էլ իրականացվել է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սոցիոլոգիական մոդելավորումը:

Աշխատության առաջին գլխի երրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման սոցիոլոգիական մոդելավորման առանձնահատկությունները. մեթոդաբանական հարցերի քննարկում»,*** ներկայացվում են սույն աշխատությունում սոցիոլոգիական մոդելավորման կիրառման և էմպիրիկ տվյալների հավաքագրման մեթոդաբանական խնդիրները, վերլուծվում են համապատասխան մեթոդների կիրառման առանձնահատկությունները և հիմնավորվում է դրանց նպատակահարմարությունը:

Մոդելավորումը վերջին ժամանակահատվածում լայն տարածում է ստացել սոցիալական գիտություններում: Այն հնարավորություն է ընձեռում մաթեմատիկական մեթոդների միջոցով լուծել սոցիալական գիտությունների առջև դրված խնդիրները:

---

[1] Տե՛ս **Parson T.** The Social System. The Free Press, New York, 1951, էջ 24:

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 31:

Մոդելավորումը ենթադրում է հետազոտության օբյեկտի ուսումնասիրություն վերջինիս մոդելի հիման վրա:

Սոցիոլոգիայում մոդելավորումը կիրառվում է հասարակական երևույթների և գործընթացների ուսումնասիրության, դրանց հիմնական բնութագրիչների վերացարկման, մեկնաբանության և հայեցակարգման, ինչպես նաև կոնկրետ իրավիճակներում օբյեկտի վարքի կամ հարաբերությունների հնարավոր փոփոխությունների ու զարգացման միտումների կանխատեսման միջոցով:

Հետազոտական այդ մեթոդը կիրառելի է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման մեկնաբանության ընթացքում, իսկ նպատակը ստեղծված իրավիճակի մոդելավորումն է տեսական կոնկրետ մոտեցման կամ մոտեցումների վերլուծակա՞ն հնարավորությունների օգտագործման միջոցով: Սույն պարագայում տեսական այդ մոտեցումներից հիմնականը համակարգային մոտեցումն է, ինչպես նաև առանձին տեսությունների այնպիսի դրույթներ, որոնք վերաբերում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման առանձնահատկություններին ու հիմնական բնութագրիչներին:

Անդրադառնալով սոցիոլոգիական մոդելավորման հիմքում ընկած մեթոդաբանությանը, նշենք, որ այն իրականացվել է Տ. Պարսոնսի տեսական համակարգի, Մ. Վեբերի իդեալական տիպի, Մ. Վարտոֆսկու՝ մոդելի ձևավորման մեթոդաբանությունների հիման վրա, որոնց համատեղ կիրառման միջոցով մշակվել է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման կառուցվածքագործառութային մոդելը: Այն ուղղված է ուսումնասիրության օբյեկտի կառուցվածքային և գործառութային բնութագրիչների մեկնաբանությանը՝ դրանց նպատակային փոփոխությունների հնարավոր տարբերակներ առաջարկելու հեռանկարով:

Քանի որ մոդելի հիման վրա կատարվող ուսումնասիրությունները և սոցիալական կանխատեսումները ենթադրում են օբյեկտի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում[3], ապա մոդելավորման բուն գործընթացին նախորդել է էմպիրիկ տվյալների հավաքագրումը: Այդ նպատակով *2014-2015 թվականների ընթացքում անցկացվել է սոցիոլոգիական հետազոտություն, որի շրջանակներում համադրվել են հետազոտական քանակական և որակական մեթոդները:*

Սոցիոլոգիական մոդելավորումը ենթադրում է նաև ուսումնասիրվող օբյեկտի գործառման մշակութային ասպեկտի, զարգացման ընթացքի և օրինաչափությունների *պատմասոցիոլոգիական վերլուծություն:* Հաշվի առնելով այդ հանգամանքը, **երկրորդ գլխի** առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Հայաստանում համայնքների դերը բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացներում.***

[3] Տե՛ս **Быстрянцев С.** Модели в социологии, էջ 261. http://cyberleninka.ru/article/n/modeli-v-sotsiologii 14.03.2015, ժամը՝ 12:30:

պատմասոցիոլոգիական վերլուծություն», քննարկվում են այդ գործընթացներում ՏԻՄ-երի՝ պատմականորեն ունեցած դերակատարման բնույթն ու ձևերը:

Հայաստանում համայնքի ազդեցությունը ժողովրդի կյանքում մշտապես եղել է անմիջական և վճռորոշ: Համայնքի դերն էական էր բնակչության սոցիալական կարիքների բավարարման և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու գործընթացներում: Այն դրսևորվում էր համայնքի անդամների միջև աշխատանքային (գյուղատնտեսական, շինարարական, խնամքի) փոխօգնության հարաբերություններ ձևավորելու և դրանց շրջանակներում համայնքի կարիքավոր անդամներին օգնելու միջոցով: Այդպես համայնքն իրականացնում էր իր առջև դրված սոցիալական պաշտպանության գործառույթները:

Խորհրդային Միության ժամանակաշրջանում բնակչության սոցիալական հիմնախնդիրների լուծման և սոցիալական տարաբնույթ ռիսկերից պաշտպանության գործառույթներն ու հիմնական պատասխանատվությունը ստանձնեց պետությունը: Այդ գործընթացների հետևանքով համայնքային իշխանությունները բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում զիջեցին իրենց դերը պետական ծառայություններին և գերատեսչություններին:

Համայնքային քաղաքական ակտիվությունների և նախաձեռնությունների նոր փուլը պայմանականորեն կարող ենք համարել Հայաստանի նորանկախ Հանրապետության ձևավորման շրջանը: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում սկսվեցին այնպիսի գործընթացներ, որոնք անմիջականորեն առնչվում են հասարակության կառուցվածքագործառութային փոփոխություններին և ունեն համակարգաստեղծ բնույթ: Դրանց հետևանքով հայաստանյան համայնքը հայտնվեց սոցիալ-տնտեսական փոխակերպումների բուռն ալիքի ներքո, որոնք թուլացրին համայնքային կապերը և փոխազդեցությունները: Համայնքի թուլացմանը զուգահեռ թուլացան նաև չձևայնացված սոցիալական աջակցության ցանցերը՝ դժվարացնելով կամ անհնարին դարձնելով համայնքի կողմից ավանդական համարվող գործառույթների իրականացումը:

Աշխատության երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված **է *«ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման բնույթը և եղանակները»,*** մանրամասնորեն նկարագրվում են հայաստանյան ՏԻՄ-երի ներկայիս դերակատարման ձևերը, միջոցները, ներկայացվում են այն ծրագրերն ու միջոցառումները, որոնք ապահովում են ՏԻՄ-երի մասնակցությունը համակարգում: Քանի որ ՏԻՄ-երի դերակատարումն էապես կախված է այն գործառույթներից, որ դրանք իրագործում են բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովման ուղղությամբ, ապա ուսումնասիրության առարկան նախ և առաջ այդ գործաոույթներն են, ինչպես նաև դրանցից բխող լիազորությունները:

2002 թվականին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի[4] համաձայն՝ ՏԻՄ-երը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ունեն *կամավոր և պատվիրակված լիազորություններ*, որոնք են համայնքի տարածքում սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրման և համայնքային ենթակայությամբ գործող սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների գործունեության կազմակերպումը *(դա ՏԻՄ-երին պատվիրակված միակ լիազորությունն է)*, ինչպես նաև համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստելը, վճարովի հասարակական աշխատանքների կազմակերպումը, հաշմանդամություն ունեցող անձանց, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկումը: Դրանք համակարգում ՏԻՄ-երի կամավոր լիազորություններն են:

Պատվիրակված լիազորության շրջանակներում Հայաստանի քաղաքային հինգ համայնքների *(Երևան, Գյումրի, Վանաձոր, Ջերմուկ, Արարատ)* տեղական իշխանությունները կազմակերպում են սոցիալական աջակցության տարածքային բաժինների գործունեությունն իրենց տարածքում: Սակայն դա՝ միայն օրենսդրորեն: Իրականում ՏԻՄ-երը որևէ էական ազդեցություն կամ շոշափելի դեր չեն ունենում բաժինների գործունեության կազմակերպման ընթացքում, քանի որ վերջիններիս այդ գործընթացներում հատկացված է միայն տեխնիկական բնույթի դերակատարում, իսկ սոցիալական աջակցության տարածքային բաժինները շարունակում են գործել կառավարության լիազորած մարմնի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության անմիջական ենթակայությամբ: Դեռևս իրավականորեն կարգավորված չեն նաև համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու, քաղաքապետարանների աշխատակազմերի ներկայացուցիչների և այդ բաժինների աշխատակիցների միջև հարաբերությունները, իրավական մակարդակում իրականացված չէ նրանց մասնագիտական դերերի այնպիսի բաշխում, որ դրանք բխեն միմյանցից և չենթադրեն գործառույթների անհարկի կրկնություններ:

Անդրադառնալով ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի կամավոր լիազորություններին, նշենք, որ դրանք ՏԻՄ-երն իրագործում են համապատասխան միջոցառումների և ծրագրերի շնորհիվ, որոնք համակարգում *ՏԻՄ-երի դերակատարման հիմնական միջոցներն են*: Հետազոտության ընթացքում ստացված տեղեկատվության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկայումս բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարումն ապահովվում է հիմնականում դրամական կամ բնամթերքով աջակցության ցուցաբերմանը միտված ծրագրերի և սոցիալական ուղղվածության որոշ միջոցառումների շնորհիվ, որոնք *հատվածային են, կարճաժամկետ, չեն բխում բնակչության կարիքներից ու չեն նպաստում դրանց բավարարմանը, այլ ապահովում*

[4] Օրենքը ներկայումս գտնվում է վերանայման փուլում:

են ՏԻՄ-երի ժամանակավոր արձագանքը համայնքի բնակիչների սոցիալական հրապարակ հիմնախնդիրներին:

Եթե նման միջոցառումները հանրապետության բոլոր համայնքներում համատարած բնույթ են կրում, ապա իր բազմաթիվ սոցիալական, առողջապահական, կրթական և մշակութային ծրագրերով հայաստանյան այլ համայնքների շարքում առանձնանում է Երևանը: Դա ունի մի քանի պատճառ. նախ՝ Երևանի ֆինանսական կարողությունները (Երևանն այսօր Հայաստանի ամենահարուստ համայնքն է, այդ թվում՝ պետությունից ստացվող ֆինանսական համահարթեցման միջոցների հաշվին) և բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում գործող ոչ պետական բազմաթիվ կազմակերպությունների հետ համագործակցելու հնարավորությունները (այդ կազմակերպությունների մեծ մասը տեղակայված է Երևանում և ծառայություններ է տրամադրում հենց մայրաքաղաքի բնակչությանը):

Երևանին համայնքի կարգավիճակ շնորհելը և ՏԻՄ-ի կազմավորման ու գործառման իրավական նոր դաշտի ձևավորումը նպաստեցին բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում Երևանի իշխանությունների կողմից միասնական քաղաքականություն վարելուն և վարչական բոլոր շրջաններում համանման ծրագրեր իրականացնելուն:

Երևանի ինքնակառավարման մարմիններին հաջողվել է դրամական օգնությունների բաշխման տեսքով տրամադրվող աջակցությունը հասցնել նվազագույնի: Այդ ուղղությամբ նպատակային քաղաքականություն է իրականացվում: Սակայն, անհրաժեշտ է փաստել, որ մայրաքաղաքի իշխանությունների նախաձեռնությունները սոցիալական ծրագրեր լինելով հանդերձ, չեն կարող որակվել որպես բնակչության սոցիալական պաշտպանության ծրագրեր, քանի որ դրանցում գերակշռում են նյութական աջակցության ծրագրերը՝ իրենց ծավալով, ընդգրկվող բնակչության թվաքանակով և ֆինանսական ծախսերով գերազանցելով սոցիալ-վերականգնողական, սոցիալ-խորհրդատվական, բնակարանային ապահովության, կանխարգելիչ և մի շարք այլ ուղղվածության ծառայություններն ու ծրագրերը, որոնք անհրաժեշտ բաղադրիչներ են վերջիններս որպես սոցիալական պաշտպանության ծրագրեր կամ ծառայություններ որակելու համար: Այդպիսով, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում հայաստանյան ՏԻՄ-երն ունեն սահմանափակ թվով գործառույթներ, փոքրաթիվ լիազորություններ և դրանց իրականացման համար ոչ բավարար միջոցներ ու պայմաններ: Սակայն դրանով համակարգում ՏԻՄ-երի դերակատարման խոչընդոտների շարքը չի սահմանափակվում: Դրանք ներկայացված են աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում, որը կոչվում է ***«ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման դիսֆունկցիաները պայմանավորող գործոնները»***: Այդ ենթագլխում որպես խոչընդոտներ ներկայացված են իրավական բնույթի խնդիրները, որոնք պայմանավորված են համակարգում ՏԻՄ-երի դերակատարման օրենսդրական թերի կարգավորումներով, իրավական դաշտի բացթողումներով, պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների համընկնումներով, ինչպես նաև բազմաթիվ գործառույթներով, որոնք օրենսդրորեն որևէ մարմնի վերապահված չեն, սակայն դրանց կարիքն առկա է:

Մեկ այլ կարևոր խնդիր է տեղական ինքնակառավարման, մասնավորապես համայնքային ծառայության համակարգում բնակչության սոցիալական պաշտպանության հարցերով զբաղվող մասնագետների բացակայությունը կամ նրանց առկայությունը միայն սակավաթիվ համայնքներում: Արդյունքում ՏԻՄ-երը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ունենում են այնպիսի դերակատարում, որը բխում է իրենց պատկերացումներից և հայեցողական վերաբերմունքից, այլ ոչ թե մասնագիտական մոտեցումներից կամ բնակչության խնդիրներից ու կարիքներից:

Համայնքային բյուջեի սահմանափակ հնարավորությունները նույնպես լրջագույն խնդիր են: Համայնքների մեծ մասն այսօր գոյատևում է պետությունից ստացված դոտացիաների հաշվին, որոնք հիմնականում ուղղվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, այսինքն՝ համայնքային ծառայողների աշխատավարձերի վճարմանը: Այդ պայմաններում ակնկալել, որ ՏԻՄ- երն ի զորու կլինեն արդյունավետ, հասցեական և մատչելի ծառայություններ մատուցել բնակչությանը, պարզապես անհնար է: Հետևաբար, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործուն դերակատարմանը խոչընդոտում են նաև համայնքների ֆինանսական խնդիրները: Մյուս կողմից խնդիր է նաև սուղ միջոցների անարդյունավետ կառավարումը. դրամական ռեսուրսների՝ առանց հիմնավորումների և որևէ լուրջ մեթոդաբանության բաշխումը, որն իրականացվում է որպես կարիքավոր բնակիչներին սոցիալական աջակցության տրամադրման ձև և այսօր դարձել է հայաստանյան ՏԻՄ-երի մեծ մասի գործառման հիմնական տարբերակը:

Բոլոր այս խնդիրների ազդեցությունը ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման վրա զգալի է և պայմանավորում է այդ դերակատարման դիսֆունկցիաները, որոնք էլ իրենց ազդեցությունն են ունենում թե՛ բնակչության սոցիալական պաշտպանության, թե՛ տեղական ինքնակառավարման համակարգի գործառման վրա:

Ներկայումս ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման դիսֆունկցիաները պայմանավորված են նաև տեղական ինքնակառավարման համակարգի, ավագանու ինստիտուտի, համայնքի զարգացման, համայնքի անդամների թույլ համախմբվածության խնդիրներով, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության համայնքային կամ տարածաշրջանային մակարդակներում գործող կազմակերպությունների հետ հարաբերություններում առկա դժվարություններով ու հակասություններով:

Աշխատանքի հիմնական նորույթը ներկայացված է **երրորդ գլխում**, որի առաջին ենթագլխում ամփոփված են ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սոցիոլոգիական մոդելավորման

արդյունքները: Այն վերնագրված է ***«ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման սոցիոլոգիական մոդելի հիմնական բնութագրիչները»***: Մոդելն իր բնույթով կառուցվածքագործառութային է. ներկայացված է հետազոտության օբյեկտի կառուցվածքային բնութագրիչների ու գործառական առանձնահատկությունների վերլուծության և հայեցակարգման միջոցով ձևավորված եզրակացությունների տեսքով: Դրանցից հիմնականներն են.

-ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ը *լիարժեքորեն չի իրագործում իր լիազորությունները և համակարգում իրեն տրված հիմնական գործառույթները*:

-ՏԻՄ-ը ներկայումս *շոշափելի մասնակցություն չի ունենում ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի խնդիրների լուծման ընթացքում և իր դերակատարմամբ չի նպաստում համակարգի հիմնական նպատակին՝ բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովմանը:* Դրա հետևանքով խախտվում է *ֆունկցիոնալ համարժեքության սկզբունքը*, որը ենթադրում է ակտորների փոխլրացնող և գործուն դերակատարման միջոցով սոցիալական համակարգի գործառման հիմնական նպատակների իրագործում:

-ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ի դերակատարման *նպատակները սահմանված չեն*: Դրանք ձևակերպված չեն օրենսդրական որևէ ակտում կամ ռազմավարական փաստաթղթում: Դա իր հերթին բերում է *համակարգում ՏԻՄ-ի դերակատարման անորոշության և սեփական դերակատարման հանդեպ հայեցողական, իսկ երբեմն նաև՝ խուսափողական վերաբերմունքի դրսևորման:*

-ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ի դերակատարման խնդիրների լուծումը հանգեցված է միայն բնակչության *սոցիալական կարիքների մասնակի և ոչ լիարժեք բավարարմանը*: Քանի որ համակարգում նման դերակատարումը բնորոշ է նաև տարածքային կառավարման մարմնին՝ մարզպետարանին, ապա գործառույթների վերածածկերի և լիազորությունների համընկնելու պատճառով երկու ակտորի դերակատարման ընթացքը ձևավորում է *ինստիտուցիոնալ քաոս:*

-ՏԻՄ-ը ներկայիս պայմաններում *ի զորու չէ համակարգում իր դերակատարումն ապահովել համայնքի բնակիչների կարիքներից բխող և հիմնախնդիրների լուծմանն ուղղված համայնքային սոցիալական ծառայություններ տրամադրելու միջոցով:*

-Այն եղանակները կամ միջոցները, որոնք ներկայումս ապահովում են ՏԻՄ-ի դերակատարումը ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում, *հատվածային կերպով և տարերայնորեն իրականացվող սոցիալական բնույթի ծրագրերն ու միջոցառումներն են:* Դրանք, սակայն, չեն բխում այդ համակարգի նպատակների կամ խնդիրների իրագործման անհրաժեշտությունից կամ բնակչության կարիքներից ու հիմնախնդիրներից, այլ ձևավորվել են *(1) համակարգում գործառելու համար օրենսդրորեն ՏԻՄ-ին տրված իրավասությունների շրջանակներում, (2) արդեն*

իսկ ձևավորված և ՏԻՄ-ի համար քիչ թե շատ ընդունելի համարվող փորձնական արդյունքների հիման վրա, (3) ՏԻՄ-ի ունեցած հնարավորությունների շրջանակում:

-*Այն պատկերացումները, որ ՏԻՄ-ն ունի համակարգում իր դերակատարման վերաբերյալ,* նույնպես էական ազդեցություն են ունենում դերակատարման միջոցների ընտրության և կիրառման վրա: Բայց *այդ պատկերացումները բնավ չեն համապատասխանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ի դերակատարման ցանկալի ձևերին և նպատակներին,* այլ զգալիորեն շեղվում են դրանցից: ՏԻՄ-ը բնակչության սոցիալական պաշտպանությունը և, համապատասխանաբար, նաև իր դերակատարումն այդ համակարգում «դիտում է» որպես դրամական օգնության բաշխման ընթացակարգերի ամբողջություն, որն առանձնապես լուրջ մասնագիտական, կազմակերպական և համագործակցային մոտեցումներ չի պահանջում, այլ միայն ենթադրում է ֆինանսական զգալի միջոցների առկայություն: Փաստացիորեն, համակարգում ՏԻՄ-ի դերակատարման միջոցները հանգեցված են հենց դրամական կամ նյութական աջակցության՝ առանց նախապես մշակված բազմագործոնային ընտրության չափանիշների կամ համալիր ուսումնասիրությունների իրականացվող բաշխմանը: Այս իրողությունը տեղ է գտնում անգամ Երևանի ինքնակառավարման մարմնի գործելաոճում, որը համարվելով հանրապետության ամենակարողունակ ՏԻՄ-ը բնակիչների սոցիալական պաշտպանվածության բարձր մակարդակ ապահովելու տեսանկյունից, այդ գործում չի ունենում զգալի ձեռքբերումներ:

-ՀՀ-ում ՏԻՄ-ն ունի բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում գործուն դերակատարման հանդեպ *շահագրգռվածության ցածր մակարդակ:*

-Համակարգում ՏԻՄ-ի դերակատարումը կարգավորող *իրավական նորմերի կողքին տեղ են գտնում չձևայնացված միջանձնային և միջազգակցական նորմերն ու սովորույթները*: Դրանց ազդեցությունը երբեմն ավելի զգալի է և վճռորոշ, քան իրավական կարգավորիչներինը:

-*ՏԻՄ-ի դերակատարումն էական չէ նաև բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի առանձին ենթահամակարգերում:* Վերջինիս բավականին արհեստականորեն տրված են քիչ թվով և սահմանափակ բովանդակությամբ լիազորություններ *միայն սոցիալական աջակցության և երեխաների պաշտպանության ենթահամակարգերում, թեև նույնիսկ* այդ լիազորությունները ՏԻՄ-ը դժվարանում է լիարժեքորեն իրագործել:

-ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ի դերակատարման համար անհրաժեշտ հիմքերի անբավարար լինելը և սակավ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը դառնում են հենց այն *հիմնական խոչընդոտները,* որոնք բերում են համակարգում ՏԻՄ-ի գործուն դերակատարման հնարավորությունների սահմանափակմանը:

-Ներկայումս ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ի դերակատարմանը խոչընդոտող գործոններն իրենց բնույթով իրավական են, կադրային, ֆինանսական, նաև կապված են տեղական ինքնակառավարման

համակարգի, համայնքների զարգացման խնդիրների, բնակչության սոցիալական պաշտպանության կառույցների հետ հարաբերություններում առաջացող դժվարությունների ու համագործակցության սահմանափակ հնարավորությունների հետ: Այդ գործոնների բացասական ազդեցությունները դառնում են համակարգում ՏԻՄ-ի դերակատարման դիսֆունկցիաները և պայմանավորում այն, որ այդ դերակատարումը լինում է *ոչ գործուն և կրում է փարերային բնույթ*:

-ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական դերակատարների հետ համագործակցությունը թույլ է, իսկ հարաբերությունների իրավական կարգավորումները՝ թերի: Որպես արդյունք՝ ՏԻՄ-ը համակարգում ունենում է *ներառվածության ցածր մակարդակ և զբաղեցնում է այնպիսի կարգավիճակ, որը նպաստավոր չէ գործուն դերակատարում ունենալու տեսանկյունից:*

-ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ը չի իրականացնում համակարգաստեղծ և համակարգապահպան այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են՝ *հարմարման, նպատակադրման, ներառման և մշակութային նմուշների պահպանման գործառույթները*՝ դրանով վտանգելով թե՛ տեղական ինքնակառավարման, թե՛ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգերի կայուն և հավասարակշռված գործառումը՝ միևնույն ժամանակ պայմանավորելով մասնակցային ժողովրդավարության և հանրային պատշաճ կառավարման հիմնարար սկզբունքների խախտումը: Դրանք ևս համակարգում ՏԻՄ-ի դերակատարման դիսֆունկցիաների շարքում են:

-Այս պարագայում խոսք անգամ չի կարող լինել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի *ապակենտրոնացվածության մասին,* որն իրականում լիարժեքորեն գտնվում է պետական մարմինների մենաշնորհային կառավարման ներքո:

-ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ի դերակատարման բնույթն իր էական ազդեցությունն է ունենում նաև համայնքի բնակիչների հետ ունեցած հարաբերությունների վրա: Մասնավորապես, այդ հարաբերությունները ներկայումս բնորոշվում են որպես բնակիչների և ՏԻՄ-ի միջև թույլ փոխազդեցություններ, հազվադեպ շփումներ ենթադրող, հաճախակի կոնֆլիկտներով ուղեկցվող և համագործակցային մոտեցումների բացակայությամբ հարաբերություններ:

Մոդելը տեսական կառույց լինելով հանդերձ, ունի գործնական նշանակություն, քանի որ այն մեկտեղում է տեսական դրույթների համակարգը կանխատեսվող փոփոխությունների ու հնարավոր առաջարկների շարքի հետ: Այդպիսով, սոցիոլոգիական մոդելը հնարավորություն է ընձեռում գիտական ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով՝ ներկայացնել նպատակային, կոնկրետ առաջարկներ՝ ուղղված մոդելավորման օբյեկտի այս կամ այն հատկանիշի փոփոխմանը, գործառման հնարավորությունների բարելավմանը:

ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-ի դերակատարման կառուցվածքագործառութային մոդելը նույնպես ընձեռում է կոնկրետ

առաջարկների ներկայացման հնարավորություն, որոնք միտված կլինեն առկա խնդիրների վերացմանը կամ դրանց ազդեցության մեղմացմանը: Այդ առաջարկները ներկայացված են աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարման ակտիվացմանն ուղղված առաջարկներ»:***

Քանի որ ՀՀ համայնքները տարբերվում են միմյանցից ժողովրդագրական ցուցանիշներով, աշխարհագրական, բնակլիմայական պայմաններով, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով և մի շարք այլ բնութագրիչներով, ներկայացվող առաջարկությունները տարբերակված են՝ հաշվի առնելով համայնքների առանձնահատկությունները, առաջին հերթին՝ ժողովրդագրական ցուցանիշները, որոնք անմիջական պատկերացում են տալիս համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին: Ընդ որում, տարբերակման հիմքում ընկած են ոչ միայն համայնքների տիպերն ըստ բնակչության թվաքանակի, այլև մասնագետների կողմից բնակչության սոցիալական սպասարկումն իրականացնելու և անհրաժեշտ ծառայություններ մատուցելու՝ միջազգայնորեն ընդունված չափանիշները:

Ներկայացնելով բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործուն դերակատարման համար առաջարկվող կառուցվածքագործառութային փոփոխությունները, նշենք, որ դրանք ենթադրում են ուղղահայաց և հորիզոնական կառավարման համակարգերում գործող կառույցների միջև գործառույթների ու լիազորությունների հստակ բաշխում և բաշխման հիմքում ընկած սկզբունքների որոշում, որոնցից հիմնականները *սուբսիդիարության և կոմպլեմենտարության սկզբունքներն են*: Դրանք հնարավորություն կտան *խուսափելու ինստիտուցիոնալ քաոսից*, քանի որ լիազորությունների բաշխումն առաջարկում են իրականացնել այնպես, որ բացառելով մեկը մյուսին, լիազորությունները լինեն փոխլրացնող և միմյանցից բխող: Այդպես, հիմնվելով այդ սկզբունքների վրա, առաջարկվում է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում պետական մարմիններին վերապահել քաղաքականության մշակման, իրավական հիմքերի ապահովման, ռազմավարական ծրագրերի ընդունման, անհրաժեշտ մեխանիզմների ներդրման, մոնիթորինգի և գնահատման գործիքների մշակման լիազորություններ, իսկ ՏԻՄ-երին տրամադրել անհրաժեշտ ծառայություններ կազմակերպելու և բնակչության համապատասխան խմբերին (կամ համայնքի ողջ բնակչությանը) մատուցելու, տեղական սոցիալական ծրագրեր մշակելու և իրականացնելու, պետական ծրագրերը տեղայնացնելու և համայնքային մակարդակում իրագործելու լիազորություններ: Այդ դեպքում հնարավոր կլինի ապահովել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման, այսպես կոչված, *«վերևից ներքև»* մոտեցման որդեգրումը, ինչն ավելի հարիր է հայաստանյան հասարակության սոցիալ-իրավական պայմաններին և պատմամշակութային միջավայրին:

Առաջարկությունների հաջորդ շարքը վերաբերում է համակարգում ՏԻՄ-երի դերակատարման կառուցվածքային բնութագրիչներին: Մասնավորապես, դրանք ենթադրում են համայնքային ծառայողների շարքում բնակչության սոցիալական պաշտպանության գծով մասնագետների՝ սոցիալական աշխատողների ներգրավում: Քանի որ յուրաքանչյուր համայնքի համար աշխատակազմի հաստիքների ավելացումը լուրջ բեռ է և հավելյալ դժվարությունների աներկբա պատճառ, ապա առաջարկվում է հաստիքների ավելացումն իրականացնել ըստ համայնքների կարողությունների, իսկ ավելի ստույգ՝ համայնքների բնակչության թվաքանակի: Այդ ցուցանիշը կօգնի որոշելու ինչպես այն մասնագետների թիվը, ովքեր պետք է սպասարկեն համայնքների բնակիչներին, այնպես էլ համայնքի նյութական հնարավորությունները, որոնք պետք է ուղղվեն բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործունեության ֆինանսավորմանը: Այսպիսով, *մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքների դեպքում* առաջարկվում է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործունեությունը կազմակերպել երկուսից երեք համայնքների համար համատեղ՝ միջհամայնքային համագործակցության շրջանակներում այդ համայնքների բնակչության սոցիալական սպասարկումն առնվազն մեկ մասնագետի կողմից իրականացնելու տարբերակով:

Սոցիալական աշխատողի առնվազն մեկ հաստիքի ներառումն առաջարկվում է *5000-ից 15000 բնակիչ* ունեցող յուրաքանչյուր, այդ թվում խոշորացված համայնքի համար: Այդ դեպքում մեկ մասնագետն ի զորու կլինի սպասարկել հենց տվյալ համայնքի բնակչությանը, իսկ համայնքը՝ ֆինանսավորել նրա գործունեությունը:

15000-ից 30000 բնակիչ ունեցող համայնքներին առաջարկվում է համայնքային ծառայողների հաստիքակազմում ներգրավել առնվազն երկու սոցիալական աշխատողի հաստիք: Իսկ այն համայնքների համար, որոնց ղեկավարի աշխատակազմում գործում են սոցիալական հարցերով զբաղվող բաժիններ, որոնք սովորաբար ունենում են 2-3 աշխատակից, առաջարկվում է վերջիններիս մասնագիտական կարողությունների զարգացման, առողջապահական, կրթական, մշակութային հարցերով զբաղվող բաժինների հետ համակարգված ու համատեղ գործունեության իրականացման և բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում գործող այլ կառույցների հետ սերտ համագործակցության միջոցով այդ բաժինները դարձնել *համայնքային սոցիալական ծառայություններ տրամադրող կենտրոններ*: Այդպես հնարավոր կլինի ապահովել սույն համայնքների ՏԻՄ-երի գործուն դերակատարումը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում:

Հայաստանի խոշոր (*30000-ից ավելի բնակչություն ունեցող*) քաղաքային համայնքների, մասնավորապես *մարզկենտրոնների և Երևանի պարագայում* առաջարկվում է ՏԻՄ-երի դերակատարումը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ապահովել *համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու ու դրանց միջոցով համայնքի բնակչությանը սոցիալական նեղ մասնագիտական ծառայություններ տրամադրելու, ինչպես նաև*

հասարակական կազմակերպություններին լիազորություններ պատվիրակելու տարբերակով:

ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործուն դերակատարման համար անհրաժեշտ հիմքերը ստեղծելու նպատակով առաջարկվում է նախ և առաջ ապահովել *իրավական համապատասխան դաշտ*: Մասնավորապես, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երին տրամադրել այնպիսի լիազորություններ, որոնք տարբերակված են ըստ իրենց կարողությունների: Անհրաժեշտ է նաև համայնքային մակարդակում բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովումը օրենսդրորեն սահմանել որպես ՏԻՄ-երի դերակատարման նպատակ և ամրագրել պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բաշխման սկզբունքները: Օրենսդրորեն կարգավորման են ենթակա նաև ՏԻՄ-երի հարաբերությունները բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում գործառող պետական և ոչ պետական կառույցների հետ: Կարևոր է, որ այդ կարգավորումներն ուղղված լինեն և նպաստեն համայնքային մակարդակում ՏԻՄ-երի նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ սոցիալական աջակցության ցանցերի ձևավորմանն ու արդյունավետ գործառմանը՝ ներառելով բնակչության սոցիալական պաշտպանության բոլոր հիմնական և հնարավոր դերակատարներին:

ՏԻՄ-երի գործուն դերակատարմանը ֆինանսական բավարար հիմքեր ապահովելու նպատակով առաջարկվում է ֆինանսական համահարթեցման համար համայնքներին տրամադրվող դոտացիաների ծավալը որոշելիս հաշվի առնել նաև ֆինանսական նախորդ տարվա ընթացքում ՏԻՄ-երի՝ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում իրականացրած գործունեության արդյունքները, և համայնքներին սուբվենցիաներ հատկացնել՝ սոցիալական ծրագրեր իրականացնելու և համապատասխան նախաձեռնություններ ունենալու համար, մոտավորապես այնպես, ինչպես դա արվում է «Հրատապ» կոչվող պետական ծրագրերի շրջանակներում:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սույն առաջարկները ներկայացնելիս՝ հնարավոր չէր լինի շրջանցել կամ հաշվի չառնել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում տեղի ունեցող լուրջ և ծավալուն բարեփոխումները, մասնավորապես՝ համայքների խոշորացման ռազմավարական ծրագիրը: Սույն աշխատության շրջանակներում առաջարկվում է, եթե ոչ համայնքների խոշորացման և արդեն խոշորացված համայնքների գործառման սկզբնական փուլում, ապա գոնե հետագա փուլերի ընթացքում համայնքներին փոխանցել բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում սոցիալական ծառայությունների կազմակերպման և տրամադրման, սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման բոլոր լիազորությունները: Դա բխում է և՛ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների, մասնավորապես՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների ստեղծման հեռանկարներից, և՛ համայնքների խոշորացման ռազմավարության հիմնական նպատակներից:

Ատենախոսության ***եզրակացության*** մեջ ներկայացված են աշխատության հիմնական եզրահանգումները, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

-Հայաստանի բնակչության սոցիալական պաշտպանության և տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվում են բարեփոխումներ, որոնք կարող են նպաստավոր լինել բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի գործուն դերակատարման համար: Սակայն մինչ նպատակային քայլերի և համակարգային փոփոխությունների կազմակերպումը կարևոր է իրականացնել համակարգում ՏԻՄ-երի դերակատարման առնչությամբ ստեղծված իրավիճակի և կուտակած փորձի *համալիր ուսումնասիրություն, հետազոտության օբյեկտի առանցքային հատկանիշների վերացարկում, գիտական մեկնաբանություն և հայեցակարգում*: Գործողությունների այս հաջորդականությունը ձևավորում է *սոցիոլոգիական մոդելավորման մեթոդի ընթացակարգը*, որը կիրառվել է սույն աշխատության շրջանակներում և որն ուղղված է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման կառուցվածքագործառութային մոդելի մշակմանը:

-Միջազգային պրակտիկայում արդեն իսկ ձևավորվել և լայնորեն կիրառվում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման մի շարք մոդելներ, որոնք սույն աշխատանքում տիպաբանված են ըստ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ապակենտրոնացվածության մակարդակի և համակարգում ՏԻՄ-երի ունեցած դերակատարման բնույթի: Հիմք ընդունելով վերոնշյալ չափանիշները, առաջարկվող տիպաբանության շրջանակներում առանձնացվում են (1) *բնակչության սոցիալական պաշտպանության ապակենտրոնացված համակարգ և այդ համակարգում ՏԻՄ-ի ինքնուրույն ու լիարժեք դերակատարում ենթադրող մոդել, (2) մոդել, որի դեպքում ՏԻՄ-ն ունենում է այնպիսի դերակատարում, որն ուղղված է տեղերում պետական քաղաքականության իրագործմանը և պատվիրակված լիազորությունների իրացմանը. վերջինս միայն այդ շրջանակներում է ինքնուրույն գործում, (3) մոդել, որի դեպքում և՛ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգն է գործում կենտրոնացված կառավարման ներքո, և՛ տեղական ինքնակառավարման համակարգի ինքնուրույն ու անկախ գործառման հնարավորություններն են խիստ սահմանափակ, ընդ որում, ինչպես բնակչության սոցիալական պաշտպանության, այնպես էլ՝ որևէ այլ համակարգում, առհասարակ:* Այդ երկրների շարքում են հետխորհրդային երկրները, այդ թվում՝ Հայաստանը:

-Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր երկրում բնակչության սոցիալական պաշտպանության գործընթացներում տեղական իշխանությունների դերակատարումն ունի սոցիալ-մշակութային նախադրյալներ: Դրանք ամփոփված են Հայաստանի տարբեր համայնքներում ձևավորված, փորձով հաստատված այնպիսի իրողությունների մեջ, որոնք ենթադրում են համայնքային իշխանությունների կարևոր մասնակցությունն ու դերը բնակիչների սոցիալական կարիքների բավարարման և անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու գործընթացներում:

-Ներկայումս, սակայն, ՏԻՄ-երը նման խնդիրների լուծման ընթացքում բազմաթիվ դժվարությունների են բախվում, որոնք էապես խոչընդոտում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում այդ մարմինների գործուն դերակատարմանը: Խոչընդոտներն առնչվում են օրենսդրական թերի կարգավորումների, ՏԻՄ-երի կադրային ու ֆինանսական խնդիրների, ռեսուրսների անարդյունավետ կառավարման, սեփական դերակատարման մասին թյուր պատկերացումների, բնակիչների սպասումներն արդարացնելու անկարողության, թույլ համագործակցությունների, համայնքային զարգացման հիմնախնդիրների հետ: Արդյունքում ՏԻՄ-ը ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում զբաղեցնում է գործուն դերակատարման տեսանկյունից ոչ նպաստավոր սոցիալական դիրք և ունենում ոչ գործուն դերակատարում: Այս դատողություններն առաջարկվող մոդելի հիմնական բաղադրիչներն են:
- Մոդելը ոչ միայն տեսական կառույց է, որն իրենից ներկայացնում է հայեցակարգման միջոցով մշակված եզրակացությունների ամբողջություն, այլև ունի էմպիրիկ հիմքեր և սոցիալական իրականության մեջ համապատասխան փոփոխություններ ներմուծելու առումով՝ գործնական նշանակություն: Դա նշանակում է, որ սոցիոլոգիական մոդելավորման արդյունքները դառնում են այն հիմքը, որոնց միջոցով հնարավոր է նպատակային փոփոխությունների ենթարկել ուսումնասիրության իրական օբյեկտի կառուցվածքը, գործառույթները կամ արտաքին ու ներքին հարաբերությունները: Ձևավորված մոդելը նման հնարավորություններ է ընձեռում նաև ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման բնույթի փոփոխման համար:

Ատենախոսության հիմնական նորույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. ***Վարդանյան Եվ. Ռ.:*** *Մոդելավորման մեթոդի կիրառման հնարավորությունները սոցիոլոգիական ուսումնասիրություններում:* Բանբեր Երևանի համալսարանի. սոցիոլոգիա, տնտեսագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, № 1, էջ 24-32
2. ***Վարդանյան Եվ. Ռ.:*** *Համայնքների խոշորացման հիմնախնդիրը ՀՀ-ում: Բանբեր Երևանի համալսարանի. սոցիոլոգիա, տնտեսագիտություն, Երևան, ԵՊՀ, 2016, № 2 (20), էջ 36-47:*
3. ***Վարդանյան Եվ. Ռ.****: ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման սոցիոլոգիական մոդելի ընդհանուր նկարագրություն: Անվտանգության հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում. Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 75-92:*
4. ***Վարդանյան Եվ. Ռ.:*** *Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղական ինքնակառավարման մարմինների ակտիվացման հնարավորությունները// ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2015, № 1.7 (10), էջ 12-19:*

5. ***Վարդանյան Եվ. Ռ.***: *Տեղական ինքնակառավարման մոդելի ձևավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում// Բանբեր Երևանի համալսարանի. սոցիոլոգիա, փնտրեսագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, № 2 (17), էջ 3-13:*
6. ***Վարդանյան Եվ. Ռ.***: *ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների դերը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում//Բանբեր Երևանի Համալսարանի. սոցիոլոգիա, փնտրեսագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, № 2 (143), էջ 13-20:*
7. ***Վարդանյան Եվ. Ռ.***: *Տեղական ինքնակառավարման մասին տեսությունների արդիականությունը ժամանակակից հասարակություններում// «Մանկավարժական միտք» հանդես, Երևան, «Զանգակ» հրատ., 2014, № 3-4, էջ 260-269:*
8. ***Варданян Е.Р.*** *Функциональные модели местного самоуправления в сфере социальной защиты населения// Современные глобальные проблемы социальных и гуманитарных наук. Санкт-Петербургский университет управления и экономики, Ереванский государственный университет: Совместный сборник научных трудов.- Санкт-Петербург, 2015, стр. 98-102.*
9. ***Варданян Е.Р.*** *Проблемы развития системы местного самоуправления в Республике Армении// "Научная мысль" ежеквартальный научно-методический журнал # 1(19).2016/ Хавроничев В.И.- Череповец, 2016, стр. 40-44.*

Варданян Евгине Робертовна

Социологическое моделирование выполнения роли органов местного самоуправления в системе социальной защиты населения Республики Армении

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01- «Методология социологических исследований, теории, социальные технологии и процессы»
Защита состоится в 15:00 23-го июня 2017 года в ЕГУ на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК РА, по адресу: 0025, г. Ереван, улица Х. Абовяна 52а, Ереванский государственный университет.

РЕЗЮМЕ

После провозглашения независимости в Республике Армении начался строй новых демократических институтов и систем общественного управления. Одной из таких систем стала система местного самоуправления, основанная в 1996 году, когда более чем в 900 общинах Армении были сформулированы органы местного самоуправления и созданы юридические основы их функционирования.
Согласно законодательству РА, органы местной власти с целью повышения благосостояния жителей общины должны выполнять функции, которые предполагают распоряжение собственностью общины, решение муниципальных задач, предоставление необходимых услуг жителям и т.д. Однако в процессе реализации этой цели органы местного самоуправления сталкиваются с разными проблемами, что

приводит к невозможности выполнения местными властями возложенной на них роли и функций.

Функционирование органов местного самоуправления Армении затруднено и в системе социальной защиты населения. Для выхода из создавшейся ситуации были проведены некоторые изменения, которые в основном носили юридический характер и не привели к значительному улучшению создавшейся ситуации.

Многие проведенные за последние годы в Армении исследования однозначно подтверждают актуальность и необходимость продуктивного выполнения органами местного самоуправления своей роли в системе социальной защиты населения, однако они не выявляют основных проблем, с которыми сталкиваются местные власти в этой системе, не анализируют причинно-следственных связей проблем, не предполагают теоретической концептуализации и, как следствие, не создают необходимых основ для формирования модели выполнения роли органов местного самоуправления в системе социальной защиты населения. Однако указанная модель необходима для глубинного и всестороннего изучения объекта, для обогащения соответствующих теоретических знаний о нем, для прогнозирования его возможных изменений в будущем и предложения комплексных решений, основанных на характеристиках конструированной модели. Настоящая работа рассматривает указанные **задачи** и ставит **целью** социологическое моделирование *выполнения роли органов местного самоуправления в системе социальной защиты населения Армении*. В этом контексте социологическое моделирование базируется на методе структурно-функционального анализа, предложенного Т. Парсонсом, на принципах создания идеального типа по М. Веберу и конструирования моделей по методологии М. Вартофского.

Основной новизной диссертационной работы является контурированная в рамках данной работы социологическая модель, которая по своей сути и предназначению является структурно-функциональной и в основном выявляет структурные, функциональные характеристики объекта. Модель представлена в качестве результатов анализа, абстрагирования и концептуализации этих характеристик и является системой соответствующих выводов и заключений о них. Некоторые из этих выводов представлены ниже:

-При выполнения своей роли в системе социальной защиты населения органы местного самоуправления Армении сталкиваются с трудностями и препятствиями, которые обусловлены *ограниченными ресурсами* (*человеческие, финансовые, административно-организационные* и т.д.) и *отсутствием необходимых предпосылок* (*юридические регулирования, социокультурный контекст* и т.д.) для продуктивного выполнения своей роли в системе.

-Кроме объективных факторов существуют также субъективные барьеры, препятствующие их активному функционированию, среди которых нужно отметить сниженную мотивацию местных властей к более продуктивным действиям и принятию на себя более широких полномочий или более серьезной ответственности, чем они имеют в данный момент, а также смутные представления о том, какой должна быть их основная роль в системе.

-Взаимоотношения органов местного самоуправления с основными организациями системы социальной защиты населения Армении, такие как государственные учреждения, международные и общественные организации, не полностью урегулированы законом. Это приводит к тому, что органы местных властей часто сталкиваются с многочисленными проблемами при сотрудничестве с этими организациями, в отношениях с которыми бывают и конфликты, и противоречия. Это дает основание утверждать, что местные органы власти в взаимоотношениях и взаимовоздействиях системы не занимают соответствующую социальную позицию для продуктивного выполнения своей роли.

- Процессы и результаты выполнения органами местного самоуправления своей роли в системе социальной защиты населения Армении негативно влияют как на эту систему, так и на систему местного самоуправления, обуславливая нарушение принципов демократии участия и эффективного правления. Эти негативные последствия являются дисфункциями выполнения роли органов местного самоуправления в системе социальной защиты населения.

Yevgine Vardanyan Robert

Sociological modeling of the role performance by the local self-government bodies within the social protection system of population

Dissertation for the scientific degree of the doctor of sociology (PhD), on the speciality 22.00.01- "Methodology of sociological research, theory, social technologies and processes".

The public defense will take place on June 23, 2017 at 15:00 at 013 "Philosophy and Sociology" SCC RA specialized Council section (Address: 0025, Yerevan, Abovyan str. 52a)

ABSTRACT

After the establishment of its independence Armenia started the creation of new institutions and democratic systems in every level of governance.

As a result the local self-government bodies have been established in more than 900 communities of Armenia. Since that period many reforms have been conducted for enhancing the purposeful role performance by the local self-government bodies within the social protection system of population. In spite of that those bodies face a lot of problems

while functioning within the system, though their purposeful role is demanded and very actual for our society. It is approved by many studies, analysis and reports.

Though those studies assure the importance of the purposeful role performance by the local self-government bodies in the social protection system of population and approve that we have many problems in our country related to that, they do not discover or highlight the reasons of those problems, do not analyze their consequences, do not model the situation we have and do not provide the package of complex recommendations for enhancing the purposeful role performance of those bodies.

The aim of the dissertation is *to model the local self-government bodies' role performance in the social protection system of population in Armenia* using the main methodology of sociological modeling. It is based on the methods of structural-functional analysis presented by T. Parsons, the principles of constructing the ideal type offered by M. Weber and forming the models suggested by M. Wartofski. The implementation of sociological modeling considers analysis, abstraction and conceptualization of the main features and characteristics of the object. The model which is designed using the described methodology is the main novelty of the dissertation. The model belongs to the structural-functional type of models and presents the main conclusions and assumptions about the object's structural and functional features. Some of those conclusions are presented below:

-The local self-government bodies face many problems and obstacles while trying to perform the role they have within the social protection system of population in Armenia. Those problems and obstacles are related to the *limited resources (financial, human, administrative) and to the abscence of the necessary bases (legal conditions, socio-cultural environment, etc).*

-Besides objective barrieris there are also some subjective reasons for passive involvment of the local self -government bodies to the social protection system of population. They have low motivation for being actively involved in it and for carrying out any responsible role. They also have not so clear vision of what should their role be within the sytem of social protection of population.

-This results to the situatuion when the local self-government bodies of Armenia are not able to provide community social services to the inhabitants and promot their social well-being. The only activities they conduct is the provision of financial and in-kind subsistance, which the local authorities undertake without any procedure of need assessment, intervention planning, continious supervision etc. In a one word, they do not carry out professional activities which are highely demended in the social protection system of population. The support they provide is limited, short-term and not effective for meeting the social needs of the inhabitants.

-The relationships of the local self-government bodies with the main organizations of the social protection system of population in Armenia (state services, international organizations, NGOs) are not fully regulated. Their collaboration is weak. Conflicts and contradictions often arise within their relationships. This means that the local self-government bodies are isolated

from the processes and functions of the system and occupy a social position which is not convenient for purposful engagement.

-As a result the role of the local self-government bodies in the social protection system of population is passive and their participation doesn't consider the realization of the main goals and tasks of that system.

-The level of decentralization of the social protection system of population in Armenia is very low. Many subsystems are totally centralized and the local self-government bodies have no commision in the relationships and processes within them. The consequences of the situation is the violation of the main prinicples of participatory democracy and good governance.